



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«28» հուլիսի 2017 թվականի N: 254 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 187 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 187 որոշման հավելվածի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Մարզպետարանում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է՝

- 1) Մարզպետի մոտ՝ յուրաքանչյուր ամսվա 1-ին և 3-րդ ուրբաթ օրերը՝ ժամը 16:00-ից,
- 2) Մարզպետի տեղակալների մոտ՝ յուրաքանչյուր ամսվա 2-րդ և 4-րդ ուրբաթ օրերը՝ ժամը 16:00-ից,
- 3) Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի մոտ՝ յուրաքանչյուր երեքշաբթի օր, ժամը 11:00-ից:»:



Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է